ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 14.10.2015թ. ստացվել է բողոք:

Բողոք բերող անձ՝ «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» բաց ընթացակարգ, ընդհանուր տարածքի և «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի ուժեղացման, արդիականացման, բարեկարգման և վերակառուցման աշխատանքների ձեռքբերում:

Բողոքի առարկան և պահանջը՝ Գնումների բողոքարկման խորհրդի կողմից որպես միջանկյալ ընթացակարգ կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել գնումների ընթացակարգը մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում կայացնելը և դադարեցնել «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ուղարկելու մասին որոշումը:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդված 9-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ